

## Հայրենադարձության խնդիրը Հայաստանի արդի քաղաքական դիսկուրսում. սիրիահայերի փորձը

Գրիգորյան Ն.Ն.

*ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության տեսության և պատմության ամբիոն /Հայաստան, Երևան/  
narekkgn@gmail.com*

**Վճռորոշ բառեր՝** հայրենադարձություն, ներգաղթ, արտագաղթ, միգրացիա, փախստական, պետական քաղաքականություն, սիրիահայեր

### **Вопрос репатриации в нынешнем политическом дискурсе Армении: Опыт сирийских армян**

*Григорян Н.Н.*

*Ереванский государственный университет,  
кафедра теории и истории политологии факультета международных отношений  
(Армения, Ереван)  
narekkgn@gmail.com*

**Резюме:** Массовый поток сирийских армян в Армению начался в 2012 году. Многие беженцы ожидали, что ситуация в Сирии будет быстро урегулирована, что и позволит им вернуться обратно. Но надежды на стабилизацию ситуации в Сирии вскоре исчезли, и большинство сирийских армян решили оставаться безопасным и стабильным беженцем в своей родной Армении. Для этнических армян Сирии, Армения считалась исторической родиной и христианской страной. Тем не менее возникли серьезные проблемы. Помимо социально-экономических трудностей, в Армении также не было законодательства, регулирующего процесс репатриации. Это также стало причиной того, что многие сирийско-армянские семьи не адаптировавшись к новой жизни в Армении, снова покинули страну. Юридический пробел в области репатриации нуждается в немедленном решении. Армения нуждается в сбалансированной миграционной политике и программе репатриации, которая будет подготовлена к будущим аналогичным ситуациям. В этом случае для иммигрантов будет проще и удобнее адаптироваться.

**Ключевые слова:** репатриация, иммиграция, эмиграция, миграция, беженец, государственная политика, Сирийские армяне.

### **Repatriation problem in Armenia's current political discourse: Experience of Syrian Armenians**

*Grigoryan N.N.*

*Yerevan State University,  
Department of Theory and History of Political Science of Faculty of International Relations  
(Armenia, Yerevan)  
narekkgn@gmail.com*

**Abstract:** The mass inflow of Syrian Armenians into Armenia started in 2012. Many refugees expected that the situation would be resolved quickly, allowing them to return to their home country. However, after hopes of the situation improving in Syria were dashed, many ethnic Armenians decided to seek secure and stable refuge in their native Armenia. For Syria's ethnic Armenians, Armenia represents a safe choice as an ancient homeland and predominantly Christian country. Nevertheless, some big problems raised. Besides the existing socio-economic difficulties in the country, Armenia faced absence of legislative procedures due to the repatriation. And that is why there have been many families that left the country again due to hardship establishing a new life in Armenia. The absence of repatriation legislation in Armenia needs an urgent response. For the upcoming situations Armenia needs a balanced migration policies and a repatriation program which make it easier and possible for the newcomers to settle.

**Keywords:** repatriation, immigration, emigration, migration, refugee, state policy, Syrian Armenians.

Ազգային շահերին համահունչ միգրացիոն միտումներ ունենալու նպատակով աշխարհի մի շարք երկրներ (Ռուսաստան, Իսրայել, Հունաստան, Իռլանդիա) այսօր վարում են ներգաղթի կամ հայրենադարձության ակտիվ քաղաքականություն, այսինքն՝ պետական քաղաքականությամբ փորձում են այնպիսի նպաստավոր պայմաններ ստեղծել, որ մշտական բնակչության նպատակով մարդիկ հայրենադարձվեն կամ տեղափոխվեն իրենց երկիր: Առհասարակ, ժողովրդագրական իրավիճակի բարելավման հայտնի գործիքներից են արտագաղթի ծավալների կրճատումը, ծնելիության խթանումը և ներգաղթը՝ հայրենադարձությունը: Եթե առաջին երկու բաղադրիչները այսօր գտնվում են հայաստանյան հասարակական-քաղաքական քննարկումների ոլորտում, ապա նույնը չենք կարող պնդել վերջինի մասին:

Հարկ է նշել, որ դարեր շարունակ գաղթի և բռնի տեղահանության ենթարկված հայ ժողովրդի պատմության մեջ մեծ կարևորություն ունեցող այս երևույթը ամբողջապես ուսումնասիրված չէ: Չնայած անկախության գրեթե երեսուն տարիների ընթացքում Հայաստանն առավելապես բախվել է հակադարձ գործընթացին, այն է՝ արտագաղթին, այնուամենայնիվ, հայրենադարձությունը կամ դրա հնարավորությունը, որպես միգրացիոն քաղաքականության ժամանակակից գործիքներից մեկը, ներկայիս հասարակական-քաղաքական դիսկուրսում համակողմանի ուսումնասիրության կարիք ունի: Սույն հետազոտությունը հենց այդպիսի նպատակ է հետապնդում:

Թեև հայկական սփյուռքը դարերի պատմություն ունի, և կազմակերպված հայկական համայնքներ վաղուց են ձևավորվել այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսիք են Եվրոպան, Մերձավոր ու Միջին Արևելքը, Հյուսիսային ու Հարավային Ամերիկան, այնուամենայնիվ, հայրենադարձությունը հայ քաղաքական մտքում համեմատաբար նոր գաղափար է: Հայրենի գիտական գրականության մեջ հայրենադարձությունն անդրադարձել են Հ. Մարությանը<sup>1</sup>, Ս.Ավետիսյանը<sup>2</sup>, Ա.Գևորգ-

յանը,<sup>3</sup> Մ.Բագարյանը<sup>4</sup> և ուրիշներ: Նշված բոլոր հեղինակների մոտ այս եզրույթի սահմանումը սերտորեն առնչվում է արտագաղթած կամ սփյուռքում հաստատված հայ էթնոսի հավաքական ինքնության գիտակցման հետ: Ընդհանուր առմամբ համաձայն լինելով տվյալ ձևակերպման հետ՝ կարող ենք նշել, որ հայկական իրականության մեջ հայրենադարձությունն այլ պետություններում բնակվող հայկական ծագումով անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակչություն հաստատելու գործընթացն է: «Հայրենադարձություն» եզրույթն առհասարակ առաջ է եկել լատիներեն *repatriātus* [*re+patri(a)+ātus*]=*վերադարձ հարենիք կամ հարազատ երկիր*/բառից և բնութագրում է երրորդ երկրներից մարդկանց տեղաշարժը իրենց ծագման երկիր: <sup>5</sup>

Հայաստանից դուրս հաստատված էթնիկ հայերի (տարբեր գնահատականներով Սփյուռքում ապրում է մոտ 7 միլիոն հայ) և Հայաստանի կապը հիմնականում պայմանավորված է անցյալի հիշողություններով, որտեղ նրանք իրենց իրական հայրենիք համարում են Հայաստանը: Այս առումով հատկանշական է սփյուռքագետ Վիլյամ Սաֆրանի սահմանումը, ըստ որի՝ աշխարհի որևէ Սփյուռքում հաստատված մարդիկ հավաքական հիշողություն ունեն իրենց իսկական հայրենիքի, դրա գտնվելու ֆիզիկական վայրի և ձեռքբերումների մասին: Նրանք նախնիների հայրենիքին վերաբերում են որպես իրենց իսկական, իդեալական հայրենիքի: Համոզված են, որ իրենք կամ իրենց զավակները պետք է վերադառնան, որի հետևանքով նրանք շարունակում են անձնապես կամ զգացականորեն կապված մնալ հայրենիքին: Այդ հանգամանքը նրանց մեջ ձևավորում է համերաշխություն և էթնոհամայնքային գիտակցություն: Հայրենիքից դուրս գտնվող հավաքական ուժերը նվիրաբերվում են հայրենիքի պահպանմանը

<sup>1</sup> **Մարության Հ.**, «Հրեական հայրենադարձության փորձից. Ալիյա. 1», «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր, 2007, N13

<sup>2</sup> **Ավետիսյան Ս.**, «Սփյուռքի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ», Երևան, 2015

<sup>3</sup> **Գևորգյան Ա.**, «Էջեր հայրենադարձության պատմությունից», Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1969

<sup>4</sup> **Բագարյան Մ.**, «Նամակներ սովետական դրախտից», Երևան, 1989

<sup>5</sup> Տե՛ս Օքսֆորդի էլեկտրոնային բառարանի բացատրությունը <https://en.oxforddictionaries.com/definition/repatriation>

կամ վերականգնմանը, անվտանգությանն ու բարեկեցությանը: Նրանք հավատացած են, որ անհնար է ամբողջությամբ ինտեգրվել ընդունող հասարակությունում, որի հետևանքով նրանք օտարված են գգում:<sup>6</sup> Միննույն ժամանակ պետք է նշել, որ այս ձևակերպումը ավելի շատ համապատասխանում է Մեծ Եղեռնի պատճառով բռնի տեղահանված և աշխարհի տարբեր անկյուններում հաստատված հայերին և նրանց սերունդներին, քան ասենք 1991թ. անկախությունից հետո Հայաստանից արտագաղթած հայերին:

Հայաստանյան արդի քաղաքական դիսկուրսում հաճախ փորձ է արվում գուցահեռներ տանել Հայաստանի և Իսրայելի միջև հիմնականում նկատի ունենալով հայ և հրեա ժողովուրդների պատմական նմանությունը: Ըստ որում, համեմատության այդ փորձը սովորաբար դրական է ընդունում հասարակական և պետական նշանակության այս կամ այն հարցի լուծման իսրայելական բանաձևը: Մի կողմ թողնելով Իսրայել պետության ստեղծման և զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները՝ այս հետազոտության ակադեմիական հետաքրքրությունների շրջանակներում անհրաժեշտ ենք համարում փոքրիկ անդադարձ կատարել Իսրայելի՝ հայրենադարձության և ներգաղթի կազմակերպման տասնամյակների հաջողված բանաձևին: Այսպես, Իսրայելում «Հայրենադարձություն» կամ «Ներգաղթ» եզրույթներին որպես հոմանիշ հրեաները օգտագործում են *Aliyah* եզրը, որը թարգմանաբար նշանակում է «Վերելք» կամ «Վեր բարձրանալ» և մատնանշում է հրեաների ներգաղթը Պաղեստին և Իսրայել:<sup>7</sup> Ժամանակի հետ այն դարձել է հրեական ինքնության յուրահատուկ կոնցեպցիա և սիոնիզմի տեսության մեջ հիմնարար տեղ է զբաղեցնում:<sup>8</sup> *Aliyah*-ը ունի ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր իմաստ:<sup>9</sup> Հրեաները հիմնականում կրթված են

այն ոգով, որ այս «Վերելք» վերադարձ է դեպի Ավետյաց երկիր՝ որպես Աստծո աստվածաշնչյան խոստման իրականացում: Էթնիկ ու հոգևոր ինքնության այս գիտակցման շնորհիվ անկախություն ձեռք բերելուց հետո Իսրայելում կազմակերպվեց հայրենադարձության մեծ ալիք: Այդ ներգաղթի և բնական աճի շնորհիվ 1948թ. 806.000-ի փոխարեն 2017թ. Իսրայելն ուներ 8.630.000 բնակչություն, այսինքն անկախության մոտ յոթ տասնամյակների ընթացքում Իսրայելի բնակչությունն աճել է ավելի քան 10 անգամ:<sup>10</sup> Սա, մեր համոզմամբ, Հայաստանի համար տպավորիչ օրինակ է:

Պատմական այս համեմատությամբ սույն ուսումնասիրությունը ցանկանում է ցույց տալ, որ 1991թ. ի վեր Հայաստանում պետության կողմից հայրենադարձություն կազմակերպելու իրական և արդյունավետ քայլեր չեն ձեռնարկվել: Չդադարող արտագաղթի ներկայիս պայմաններում որոշ հեղինակներ հայրենադարձության մասին խոսելն անգամ ժամանակավրեպ են համարում:<sup>11</sup> Այս տեսակետի կողմնակիցները պնդում են, որ Հայաստանը չունի այնպիսի կարողություններ, որոնք հնարավորություն կտան միգրացիոն բացասական ցուցանիշները մեղմելու նպատակով կազմակերպել հայրենադարձության խոշոր ծրագրեր: Այստեղ ճշմարտության հատիկն այն է, որ 90-ականներից մինչև մեր օրերը տեղի ունեցած հայրենադարձության մի քանի ալիքները տարերային են եղել՝ պետության կողմից չծրագրավորված: Թե՛ 1989-1991թթ. ադրբեջանահայերի, թե՛ 2003թ. իրաքահայերի և թե՛ 2011թ. սկսած սիրիահայերի ներհոսքը պետության կողմից կազմակերպված և ծրագրավորված չեն եղել: Ավելին, ներհոսքի այս օրինակների հետևանքով պետությունը բախվել է մի շարք սոցիալական խնդիրների, որոնք հետագայում Հայաստանը վերստին լքելու պատճառ են հանդիսացել ներգաղթածների մի զգալի մասի համար: Չնայած այս իրողությանը՝ կարելի է և պետք է պնդել, որ ծրագրավորված և գործուն հայրենադարձութ-

<sup>6</sup> Safran W. *Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return*. Diaspora, (1991), pp 83-84.

<sup>7</sup> Առավել մանրամասն տե՛ս «Իսրայելի համար հրեական գործակալության» սահմանումը, <http://www.jewishagency.org/aliyah/>

<sup>8</sup> Brian Amkraut, *Between Home and Homeland: Youth Aliyah from Nazi Germany*, The University of Alabama Press, 2006

<sup>9</sup> Katy Long, «The point of no return: Refugees, Right and Repatriation», Oxford University Press, 2013

<sup>10</sup> Տե՛ս հրեական էլեկտրոնային գրադարանի վիճակագրությունը <http://www.jewishvirtuallibrary.org/population-of-israel-1948-present>

<sup>11</sup> Հովյան Վ., «Հայրենադարձության խնդիրն արդի փուլում» [http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT\\_ID=15058](http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=15058)

յուն կազմակերպելու համար անհրաժեշտ է նախնառաջ համապատասխան օրենսդրական դաշտ և ներպետական ընթացակարգեր ապահովել: Դրանք հնարավորություն կտան «*միգրացիա և զարգացում*» ձևակերպման շրջանակներում լուծել ոչ միայն ժողովրդագրական հիմնախնդիրներ, այլև նորեկների մասնագիտական հմտությունները, գիտելիքները և ֆինանսական կարողությունները ուղղել երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Մինչդեռ ներկայումս Հայաստանում հայրենադարձությանը նպաստող միջավայրի ստեղծման խնդիր կա: Ավելի՛ն, արդի հասարակական-քաղաքական դիսկուրսում հայրենադարձության շուրջ ծավալվող քննարկումները, վերլուծություններն ու առաջարկները խիստ սակավաթիվ են: Անգամ 6-րդ գումարման Ազգային ժողովում ներկայացված կուսակցությունների նախընտրական ծրագրերի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ այն քաղաքական այդ ուժերի կողմից օրակարգային հարց չի հանդիսանում: Այսպես, հայրենադարձությանն իրենց նախընտրական ծրագրերում անդրադարձել են միայն «Ելք» կուսակցությունների դաշինքն ու «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը: «Ելք»-ի ծրագրում նշված է, որ Հայաստանի բնակչության թիվը հնարավորինս կարճ ժամկետում կրկնապատկելու միջոցը մեծ հայրենադարձություն կազմակերպելն է, և անհրաժեշտ է Հայաստանը դարձնել բոլոր հայերի երկիր, այնպես, որ աշխարհի ցանկացած կետում գտնվող հայ իրեն նույնականացնի հայկական պետականության հետ և այն դիտարկի եթե ոչ իր, առնվազն իր սերունդների պոտենցիալ բնակավայր:<sup>12</sup> «Ելք»-ը այսքանով սահմանափակվում է հայրենադարձությանն իր անդրադարձի մեջ, և ծրագրում նկարագրված չէ գործողությունների այն համալիրը, որը կարող է ապահովել էթնիկ հայերի ներհոսքը դեպի Հայաստան: Գրեթե նույն պատկերն է նաև «Հայ հեղափոխական դաշնակցության» ծրագրում, որտեղ առաջարկվում է վարել ակտիվ հայրենադարձման քաղաքականություն և նպաստել, որ հայրենիքից հեռացած հայերը վերա-

դառնան իրենց երկիր:<sup>13</sup> Այստեղ ևս պարզ չէ, թե ինչպես է պատրաստվում «Հայ հեղափոխական դաշնակցություն»-ը քաղաքական իշխանության անհրաժեշտ ռեսուրսներ տնօրինելու դեպքում կազմակերպել և վարել արդյունավետ հայրենադարձման քաղաքականություն: 2017թ. խորհրդարանական ընտրություններից հետո ՀՀ ԱԺ-ում հայտնված մյուս երկու ուժերը՝ «Ծառուկյան դաշինք»-ը և «Հայաստանի հանրապետական կուսակցություն»-ը առհասարակ իրենց ծրագրերում որևէ անդրադարձ չեն կատարել հայրենադարձությանը:

Վերևում նկարագրվածը ցույց է տալիս, որ թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր քաղաքական էլիտան հայրենադարձության խնդիրը հավուր պատշաճի չի կարևորում կամ հնարավոր է անգամ՝ չի պատկերացնում խնդրի լուծման ուղիները: Ասվածի վատ վկայությունն է 2011թ. ի վեր Միրիայում բռնկված պատերազմի հետևանքով սիրիահայերի զանգվածային ներհոսքով պայմանավորված հիմնահարցերի գոյացումը, որոնք հիմնականում նախորդող ժամանակահատվածում համանման խնդիրներին իրավիճակային լուծումներ տալու քաղաքականության հետևանք են: Մասնավորապես, Իրաքի 2003թ. պատերազմի օրերին Հայաստանում լայնորեն բարձրաձայնվեցին սփյուռքահայության առջև ծառացած վտանգներն ու մարտահրավերները, հայրենադարձության ծրագրերի անհրաժեշտությունը, և որոշակի քննարկումներ ծավալվեցին, սակայն զարգացումներ չեղան, ուստի քննարկումներն այդպես էլ պետական մասշտաբների ծրագրի ու քաղաքականության չվերաճեցին: Խնդիրը հետաձգվեց այնքան, մինչև հաջորդ՝ Միրիայի ճգնաժամը կրկին արդիական դարձրեց այն: Պետական կարգավորումների բացակայության պատճառով Միրիական պատերազմի հետևանքով տեղահանված հայերին օգնություն ցուցաբերելու նպատակով Հայաստանում և Մփյուռքում ստեղծվեցին հասարակական տարբեր նախաձեռնություններ: Դրանք ստիպված էին իրականացնել այնպիսի գործառույթներ, որոնք սովորաբար վերապահված են պետական ինստիտուտներ-

<sup>12</sup> Տե՛ս «ԵԼՔ դաշինք»-ի՝ ՀՀ ԱԺ 2017թ. ընտրությունների նախընտրական ծրագիր, <http://www.parliament.am/library/AJ2017/cragrer/elq.pdf>

<sup>13</sup> Տե՛ս «Հայ հեղափոխական դաշնակցության»՝ ՀՀ ԱԺ 2017թ. ընտրությունների նախընտրական ծրագիր, <http://www.arfd.info/hy/?p=34346>

րին: Մասնավորապես, այդպիսի նախաձեռնություններից էր հայտնի պետական-հասարակական գործիչ Վահան Հովհաննիսյանի կողմից կոորդինացվող և հատուկ սիրիահայերին աջակցելու համար ստեղծված «Օգնի՛ր եղբորդ» բարեգործական հիմնադրամը, որը 2012թ. հոկտեմբեր ամսից սկսեց հումանիտար օգնություն ուղարկել Սիրիա:<sup>14</sup> Հետագայում այն սկսեց մարդասիրական օգնություն ցուցաբերել նաև Հայաստան տեղափոխված սիրիահայերին:

Հայրենադարձությունը խթանող պետական ծրագրեր մշակելու, ժողովրդագրական ցուցանիշների բարելավման, համազգային խնդիրների լուծման գործում սփյուռքահայերի մասնակցությունն ապահովելու և այլ նպատակներով 2008թ. ստեղծվեց ՀՀ սփյուռքի նախարարությունը, որը 2011թ. մշակեց «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:<sup>15</sup> Վերջինս սահմանում էր հայրենադարձության հետ կապված պետական քաղաքականության սկզբունքները, հայրենադարձության կազմակերպման և իրականացման կարգն ու պայմանները, հայրենադարձության կազմակերպաիրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, ինչպես նաև հայրենադարձի ինտեգրման և արտոնությունների տրամադրման կարգերը: Օրենքի նախագիծը սահմանում էր նաև «Հայրենադարձություն» և «Հայրենադարձ» հասկացությունները՝ նպատակ ունենալով կարգավորել հայրենադարձության հետ կապված իրավահարաբերությունները: Միննույն ժամանակ սույն նախագծով հստակեցվում էր նաև հայրենադարձության համար դիմումի ներկայացման և ծագումով հայ լինելու որոշման կարգը, հայրենադարձի իրավունքներն ու կարգավիճակը, նրան տրամադրվող արտոնությունների շրջանակը և այլն: Նշենք, որ օրենքի կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ էին պետական բյուջեից որոշակի ֆինանսական հատկացումներ (Հոդված 12), և ըստ ամենայնի դրանով է նաև պայմանավորված, որ «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը կառավարության կողմից հաստատելվելուց հետո առ այսօր

չի քննարկվել Ազգային ժողովում և դեռևս չունի օրենքի կարգավիճակ:<sup>16</sup>

*Հայրենադարձության ոլորտում իրավաքաղաքական անորոշությունը փոքր-ինչ մեղմեց 2010թ. կառավարության ընդունած «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման մասին» հայեցակարգը*<sup>17</sup> (այսուհետ՝ *Հայեցակարգ*), որի հիմքում սակայն դրված չէ աշխարհասփյուռ հայության զանգվածային հայրենադարձության կազմակերպումը և այդ գործընթացի կանոնակարգումը: Այն վերաբերում է այն հայերին, որոնք կամավոր ցանկություն կհայտնեն բնակություն հաստատել Հայաստանի Հանրապետությունում: Հայրենադարձության գործընթացն արդյունավետ կազմակերպելու նպատակով Հայեցակարգով նախատեսվում է Սփյուռքում և Հայաստանում անցկացնել նախապատրաստական աշխատանքներ, ստեղծել հայրենադարձությունը կազմակերպող, իրականացնող և այդ գործընթացին օժանդակող մարմիններ (Հայրենադարձության հարցերով գործակալություն, Հայրենադարձության հիմնադրամ և այլն), ինչպես նաև աջակցել հայրենադարձների ինտեգրման հարցերով հասարակական կազմակերպությունների, աշխատանքային խմբերի և ինտեգրման կենտրոնների կազմավորմանը: Նախատեսվում է նաև Սփյուռքում անցկացնել հայրենադարձությանը նպաստող կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, իսկ Հայաստան տեղափոխված հայրենադարձներին՝ հասարակությանն արագ ինտեգրվելու մեխանիզմներ:<sup>18</sup> Նշված նպատակներին հասնելու համար հետագայում կառավարության կողմից գործողության ծրագրեր կամ նորմատիվ-իրավական այլ ակտեր չընդունվեցին:

2011թ. Մերձավոր Արևելքում ծավալվող իրադարձությունների հետևանքով Եվրոպայում ծագած միգրացիոն ճգնաժամը համարվում է ամենախոշորը Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր: Միջազգային տարբեր գնահատականներով Սիրիայում 2011թ. մարտի 11-ին սկսված հակամարտութ-

<sup>14</sup> Տե՛ս մամուլի հրապարակումները <https://armenpress.am/arm/news/697176/help-your-brother-initiative-will-also-help-the-syrian-armenians-settled-in-armenia.html>,

<sup>15</sup> Տե՛ս «Հայրենադարձության մասին ՀՀ օրենքի նախագիծ», <http://www.mindiaspora.am/am/Projects>

<sup>16</sup> Տե՛ս ՀՀ ԱԺ օրենքների նախագծերի գրադարանի տվյալները, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5020&Reading=0>

<sup>17</sup> Տե՛ս ՀՀ կառավարության N48 որոշման հավելված, 9 դեկտեմբերի, 2010թ.

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը

յան հետևանքով մահացել է մոտ կես միլիոն մարդ,<sup>19</sup> ավելի քան 11 միլիոն մարդ լքել է իր տունը, որից 5,5 միլիոնը դարձել է փախստական, իսկ 6,3 միլիոնը՝ ներքին տեղահանված:<sup>20</sup> Մինչև 2011թ. Սիրիայում բնակվում էր ավելի քան 100 հազար հայ, հիմնականում՝ Հալեպում, Դամասկոսում, Դեյր Ջորում, Հասաբեում, Ռակկայում, Հոմսում, ինչպես նաև Լաթաքիայում, Քեսաբում և այլ շրջաններում:<sup>21</sup> Նրանց մեծ մասը լքել է Սիրիան, իսկ հեռացածների մի մասը հաստատվել է Հայաստանում:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում այժմ հանրային քննարկման դրված «Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թթ ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի համաձայն (այսուհետ Ռազմավարության նախագիծ)՝ Սիրիայի Արաբական Հանրապետությունում հակամարտության սկսվելուց ի վեր ավելի քան 22.000 մարդ, առավելապես ազգությամբ հայեր, ինչպես նաև արաբներ, քրդեր, ասորիներ տեղահանվել և պաշտպանություն են գտել Հայաստանում:<sup>22</sup> Ռազմավարության նախագծի գլխավոր նպատակը Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր Հայաստան տեղափոխված անձանց հասարակական կյանքին ինտեգրման գործընթացի արագացումն է: Այս փաստաթուղթը փոքր-ինչ ուշացած, բայց

անհրաժեշտ իրավական ակտ է: Ուշացած է, որովհետև սիրիահայերի մի ստվար զանգված, Հայաստանում առերեսվելով վարչարարության, իրավական փոխօգնության, ինքնուրույն տնտեսական գործունեությամբ զբաղվելու հետ կապված և այլ հիմնախնդիրների, ստիպված կրկին լքել է Հայաստանը: Հայաստանում բնակվելու սիրիահայերի հիմնական շարժառիթը ազգությամբ հայ լինելն ու սեփական երկրում հաստատվելն է: Այդուհանդերձ, սիրիահայերը հեռանում են Հայաստանից, քանի որ դժվարություններ կան աշխատանք, բնակարան ձեռք բերելու և որպես անհատ կայանալու հարցերում:<sup>23</sup> Փաստաթղթի ընդունումն անհրաժեշտ է այս ոլորտում օրենսդրական բացը լրացնելու, նպատակաուղղված պետական քաղաքականություն սահմանելու, սիրիահայերին Հայաստանում ինքնակայանալու հնարավորություններ ընձեռելու և վերջապես նրանց հնարավոր արտահոսքը կասեցնելու տեսանկյունից:

Սիրիահայերի ներգաղթը դեպի հայրենիք միանշանակ չի ընկալվում Հայաստանի ներքին և արտաքին հարթակներում: Եթե ներքին հարթակի հասարակական-քաղաքական քննարկումներում նրանք հիմնականում դիտվում են որպես հայրենադարձներ, և ըստ այդմ սպասելիքներ են ձևավորվում, որ պետությունը պետք է առաջնային դերակատարություն ունենա նրանց ամենատարբեր հարցերում նեցուկ լինելու գործում, ապա արտաքին հարթակում իրավիճակը լիովին այլ է: ԵՄ-ի մի շարք երկրների, ԱՄՆ-ի և աշխարհի այլ ուժային կենտրոնների կողմից նրանք որրակվում են որպես փախստականներ, և մեր կարծիքով շատ տրամաբանական կլիներ սպասել, որ Հայաստանը փորձեր օգտագործել սույն նշանակալի փաստը ԵՄ-ի համար անչափ ցավոտ միզբացիոն ճգնաժամի պատճառ դարձած այս հարցում: Մասնավորապես, փախստականների տեղավորելու ու կարգավիճակ տալու համար կարելի էր ստանալ թե՛ նյութական և թե՛ քաղաքական աջակցություն: Ի վերջո, եվրոպական չափանիշներով 22 հազար սիրիացի փախստական ընդունելը (այն էլ՝ փոքր երկրի կողմից) հերոսություն է և

<sup>19</sup>ՄԱԿ-ի Սիրիայի հարցերով հատուկ հանձնակատարի գրասենյակի տվյալներով՝ 2016թ. սկզբին զոհերի թիվը հակամարտության ընթացքում հասել է 400 000-ի <http://foreignpolicy.com/2016/04/22/u-n-envoy-revises-syria-death-toll-to-400000/>, Քաղաքական հետազոտությունների սիրիական անկախ կենտրոնի տվյալներով՝ 2016թ. փետրվարի դրությամբ սիրիական հակամարտության զոհերի թիվը կազմել է 470 000 մարդ <https://www.hrw.org/world-report/2017/country-chapters/syria>

<sup>20</sup> The UN Refugee Agency, Global Trends, p.6, <http://www.unhcr.org/5943e8a34>

<sup>21</sup> Տե՛ս ՄԱՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի զեկույցը, [http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/44/Arshak\\_Poladyan.pdf](http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/44/Arshak_Poladyan.pdf)

<sup>22</sup> Տե՛ս «Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թթ ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, <https://www.e-draft.am/projects/679/justification>

<sup>23</sup> Տե՛ս ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի հայտարարությունը ՀՀ ԱԾ-ում, 11 հունիս, 2015թ. <https://www.pastinfo.am/hy/news/2015/11/06/4-000>

արժանի է գնահատականի: Դա առավել արդիական է այն պահին, երբ եվրոպական որոշ երկրներ չեն ցանկանում կիսել համաեվրոպական այս աղետը, և որևէ այլ երկրի աջակցություն երախտապարտությամբ է ընդունվում: Հայաստանը գործնականում որևէ քայլ չի ձեռնարկում այս հարցում արևմտյան երկրներից աջակցություն ստանալու նպատակով: Արդյունքում Եվրոպայում քաղաքական որոշումների ընդունման կենտրոնները գրեթե անտեղյակ են, որ փոքր ու համեստ հնարավորություններով Հայաստանը շուրջ 22 հազար փախստական է ընդունել:

Սույն թվականի փետրվարի 23-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացած Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստի ընթացքում ՀՀ ԿԱ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետ Մ. Բիչախյանը ընդգծեց, որ 2011թ. ի վեր 19 հազար 506 սիրիահայ ՀՀ քաղաքացիություն է ստացել:<sup>24</sup> Իսկ *ի նչ խնդիրների են բխվում Միրիայից եկած հայերը Հայաստանում, ինչպես են նրանք ապրում և ապագայի ի նչ տեսչական ունեն:* Առաջին խնդիրներից, որին բխվեցին սիրիահայերը, աշխատանքի բացակայությունն էր և մասնագիտության անհամապատասխանությունը աշխատանքային շուկային: Գործազրկության պայմաններում նրանցից շատերը դեռևս չունեն աշխատանք: Միրիահայերի մի մասը սեփական գործ հիմնեց, նրանց մի մասին պետությունը արտոնյալ պայմաններով վարկեր տրամադրեց: Շատերն իրենց արհեստները Միրիայից տեղափոխեցին Հայաստան: «Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Լենա Հալաջյանի կարծիքով սիրիահայերի խնդիրները Հայաստանում նույնն են, ինչ որ ցանկացած փախստականին՝ այլ երկրներում:<sup>25</sup> Ըստ նրա դեռևս չլուծված խնդիրներ կան Հայաստանում գտնվող սի-

րիահայերի փաստաթղթերի ճանաչման, պատշաճ առողջապահության կազմակերպման, կրթության, աշխատանք գտնելու, բնակարաններով ապահովելու և հասարակությանն ինտեգրվելու գործում:

*Ընդգծենք, որ սրանք այնպիսի հիմնահարցեր են, որոնք եթե պետության կողմից անհրաժեշտ ուշադրության չարժանանան, ժամանակի ընթացքում կստիպեն Հայաստան տեղափոխած սիրիահայերին այլ երկիր տեղափոխվել: Ուստի, ժամանակի հրամայականն է Հայաստանում ունենանալ հայրենադարձությունը կարգավորող համապատասխան օրենսդրություն. խոսքը հայրենադարձության մասին օրենքի, ռազմավարության, հայեցակարգի և գործողությունների ծրագիր մշակելու մասին է, որտեղ պետք է ամրագրել հայրենադարձության բնագավառում պետական քաղաքականության մոտեցումներն ու սկզբունքները: Կարելի է ընդգծել նաև հայրենադարձության կազմակերպման որոշակի փուլեր, որոնցից յուրաքանչյուրը պետք է ունենա կոնկրետ գործողությունների ծրագիր: Օրենսդրական և ինստիտուցիոնալ համապատասխան հենք ունենալու պարագայում հնարավոր կլինի խուսափել տարերային և չհամակարգված գործողություններից: Այդ իսկ պատճառով պետք է արձանագրել, որ վերևում նշված հումանիտար օգնություն ցուցաբերող հասարակական տարբեր նախաձեռնությունների ստեղծումն անհրաժեշտ, բայց ամենինն ոչ բավարար պայման է նմանատիպ իրավիճակները հավուր պատշաճի կառավարելու տեսանկյունից: Մեր կարծիքով, այս ոլորտում օրենսդրական կարգավորումների բացակայությունը պայմանավորված է հիմնախնդրի նկատմամբ Հայաստանի քաղաքական դիսկուրսի անտարբեր վերաբերմունքով: Ակնհայտ է, որ աշխարհի թե՛ անկյուններում սփյուռքի մեծ համայնքներ ունեցող երկիրը միշտ կարող է բխվել տարերային հայրենադարձության երևույթին և ըստ այդմ իրավական ընթացակարգեր և օրենսդրական դաշտ պետք է ունենա անհրաժեշտության դեպքում կիրառելու համար: Մինչդեռ այսօր պարզ չէ, թե որն է հայրենադարձության ոլորտում ՀՀ պետական քաղաքականությունը: Պետք է փաստել, որ ստեղծվել է մի վիճակ, երբ հայ ժողովուրդը ժողովրդագրական առումով տանուլ է տալիս իր բոլոր մահմեդական հարևան-*

<sup>24</sup> Տե՛ս Միրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստը, 23 փետրվար, 2018թ., <http://www.mindiaspora.am/am/News/5719>  
<sup>25</sup> Տե՛ս «Մեդիամաքս» լրատվական գործակալության «Միրիահայերը Հայաստանում. խնդիրներ և ձեռքբերումներ» հոդվածը, <http://www.mediamax.am/am/news/special-report/14208/>

ներին, մինչդեռ դրանցից երկուսը Հայաստանին թշնամի-հակառակորդ պետություններ են: Ի վերջո, անհրաժեշտ է գիտակցել, որ Հայաստանի շուրջ ծավալվող ներկայիս աշխարհաքաղաքական իրողությունների պարագայում հայրենադարձության գործընթացն ազգային ծրագրի էական բաղադրիչներից մեկը պետք է լինի:

#### Գրականության ցանկ

1. **Մարության Հ.**, «Հրեական հայրենադարձության փորձից. Ayilah 1», Գլոբուս վերլուծական տեղեկագիր, N13, 2007
2. **Ավետիսյան Ս.**, «Միլիոնների ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ. զարգացման հեռանկարներ», Երևան, 2015
3. **Գևորգյան Ա.**, «Էջեր հայրենադարձության պատմությունից», Բանբեր Երևանի արխիվների, 1969
4. **Բազարյան Ս.**, «Նամակ սովետական դրախտից», 1989
5. **Հովյան Վ.**, «Հայրենադարձության խնդիրն արդի փուլում», [http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT\\_ID=15058](http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=15058)
6. «ԵԼՔ» դաշինքի 2017թ. ՀՀ ԱԺ ընտրությունների նախընտրական ծրագիր <http://www.parliament.am/library/AJ2017/cragrer/elq.pdf>
7. **Խոջաբեկյան Վ.**, «Հայաստանի բնակչության արտագաղթը և միտումները մոտ ապագայում», 21-րդ Դար, N6, 2006
8. «ՀՅԴ» 2017թ. ՀՀ ԱԺ ընտրությունների նախընտրական ծրագիր <http://www.arfd.info/hy/?p=34346>
9. «Հայրենադարձության մասին ՀՀ օրենքի նախագիծ» <http://www.mindiaspora.am/am/Projects>
10. **Մարաշյան Վ.**, «Հայրենադարձների փորձն ու ինտեգրումը Հայաստանում: Խոչընդոտներ և հնարավորություններ», 2014
11. **Brian Amkraut**, Between Home and Homeland: Youth Aliyah from Nazy Germany, The University of Alabama Press, 2006
12. **Katy Long**, The point of no return: Refugees, Right and Repatriation, Oxford University Press, 2013
13. **Safran W.** Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return. Diaspora, 1991